Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ՀՀ 2009 թվականի պետական բյուջեն հաստատել՝ եկամուտների գծով (ներառյալ պաշտոնական տրանսֆերտների տեսքով ստացվող մուտքերը)՝ 905.4 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 945.4 մլրդ դրամ, իսկ դեֆիցիտը՝ 40.0 մլրդ դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի գումարը՝ 40.0 մլրդ դրամը, ՀՀ 2008 թվականի պետական բյուջեով հաստատված և ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի կատարման արդյունքներով փաստացի ձևավորված համադրելի ցուցանիշների նկատմամբ նախատեսված է համապատասխանաբար՝ 36.0 մլրդ դրամ նվազեցումով և 18.9 մլրդ դրամ ավելացումով: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի և 2009 թվականի ծրագրվող ՀՆԱ-ի տոկոսային հարաբերությունը կանխատեսվում է 1.0%-ի չափով, 2008 թվականի համար ծրագրված և 2007 թվականի փաստացի ցուցանիշների՝ համապատասխանաբար 2.1%-ի և 0.6%-ի դիմաց: ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նախագծի դեֆիցիտի ֆինանսավորման համար նախատեսվում է ներգրավել շուրջ 162.7 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով վարկեր, որոնց զգալի մասը կտրամադրվի Համաշխարհային բանկի կողմից (ներգրավվող վարկերի տրամադրման ժամկետների և տոկոսադրույքների մասին տվյալները ներկայացված են սույն բացատրագրի N 1 հավելվածում և N 19 աղյուսակում):